ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/02

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ
Բողոքաբեր՝ «Վերիտաս» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՃՇՀԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/01» ծածկագրով գնանշման հարցում, լաբորատոր սարքերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Վերիտաս» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Բողոքաբեր) կողմից 21.01.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Բողոքաբերը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտադրել պատվիրատուին ընդունել որոշում չեղյալ հայտարարել ընթացակարգը, հայտարարել նոր ընթացակարգ համապատասխանեցված Գնումների մասին ՀՀ օրենքի և Գնումների գործընթացների կազմակերպման կարգի վերաբերյալ ՀՀ Կառավարության որոշման պահանջներին:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 21.01.2021թ.-ին:

21.01.2021թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/02 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

29.01.2021թ.-ին և 05.02.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 29.01.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 05.02.2021թ.-ին:

2. «Վերիտաս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Վերիտաս» ՍՊԸ-ն 21.01.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1.1 «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամը լաբորատոր սարքերի ձեռքբերման նպատակով 2021թ. հունվարի 15 ին հրապարակել է «ՃՇՀԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

1.2 Սույն բողոքը ներկայացնելուց առաջ, մեր ընկերությունը բանավոր կերպով առաջարկել է Պատվիրատուին կատարել համապատասխան փոփոխություններ հրավերում այն համապատասխանեցնելու Գնումների մասին ՀՀ օրենսդրության և Գնումների գործընթացների կագմակևրպման կարգի վերաբերյալ ՀՀ Կառավարության որոշման պահանջների հետ: Պատվիրատուի կողմից տրվել են բանավոր պարզաբանումներ, որոնք մեր ընկերությունը համարում է ոչ հիմնավոր:

Այնուհետև մեր ընկերության էլեկտրոնային փոստից ուղարկվել է նամակ Պատվիրատուի հետևյալ էլեկտրոնային փոաստի հասցեին gnumner.nuaca@gmail.com:

Նամակում հստակ արտահայտել ենք մեր դիրքորոշումը այն մասին, որ Պատվիրատուն իրավունք չունի խմբավորել տարբեր բնութագրեր ունեցող ապրանքները

մեկ չափաբաժնում, ինչպես նաև չի կարող սահմանել այնպիսի տեխնիկական բնութագրեր, որոնց համապատասխանում է միայն մեկ արտադրող:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պատվիրատուի կողմից որևէ գրավոր արձագանք չենք ստացել, ուստի ներկայացնում ենք սույն բողոքը:

Հայտնում եմ Ձեզ, որ Պատվիրատուի կողմից հրապարակված հրավերում թվով 10 անվանում լաբորատոր սարքերը և պարագաները խմբավորված են մեկ չափաբաժնում, ինչը խոչընդոտում է մրցակցությանը, կտրուկ սահմանափակում մասնակիցների թիվը:

Գնումների մասին ՀՀ օրենսդրության 25-րդ հոդվածի 2 կետում նշված է.

«2. Արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը:»: Տվյալ դեպքում Պատվիրատուն խմբավորել է տարբեր բնութագրեր ունեցող ապրանքներ մեկ չափաբաժնում, ինչը անթույլատրելի է, քանի որ առկա են բազմաթիվ ընկերություններ, որոնք կարող են հայտ ներկայացնել մեկ կամ երկու կամ հինգ ապրանքի համար, սակայն չեն կարող հայտ ներկայացնել ողջ 10 անվանում ապրանքի համար, հետևաբար արհեստական դուրս են թողնվում մրցակցությունից:

ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526 Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և ՀՀ Կառավարության 2017թ. նոյեմբերի 16-ի N 1454-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ Կառավարության 10 հոկտեմբերի 2019 թվականի N 1422-Ն որոշման 22-րդ կետում նշված է, որ. «2. Գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի», սակայն Պատվիրատուն ցանկում ներառել է այնպիսի ապրանքներ, որոնք ունեն մեկ արտադրող, օրինակ Մամլիչի կառավարման ծրագրային հատուկ ապահովումը, որը պետք է համատեղելի լինի Matest սեղմման մեքենա C041A-ի հետ: Ակնհայտ է, որ նշված մասնագիտացված սարքավորման հատուկ ծրագրային ապահովման միակ արտադրողը իտալական Matest ընկերությունն է, որին մեր ընկերությունը գրել է նամակ և ստացել պատասխան, որ ունեն ներկայացուցիչ ՀՀ-ում, հետևաբար սահմանափակվեց մրցակցությունը:

Սա միակ ապրանքը չէ հրավերում, որն ունի մեկ արտադրող: Այդ օրինակներին կարող ենք անդրադառնալ ինչպես լրացուցիչ նյութեր ներկայացնելով, այնպես էլ բողոքի քննարկման ժամանակ:

Հարկ է նաև նշել, որ Պատվիրատուն gnumner.am կայքում հրապարակել է իր գնումների պլանը, որտեղ բոլոր ապրանքներն ունեն իրենց առանձին նախահաշվային գները: Սա ևս մեկ արգումենտ է, որը ցույց է տալիս, որ այդ ապրանքները պետք է բաժանել ըստ լոտերի:

Գնումների մասին ՀՀ օրենսդրության 25 րդ հոդվածի 2 կետում նշված է.

«2. Արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը:»: Տվյալ դեպքում Պատվիրատուն խմբավորել է տարբեր բնութագրեր ունեցող ապրանքներ մեկ չափաբաժնում, ինչը անթույլատրելի է, քանի որ առկա են բազմաթիվ ընկերություններ, որոնք կարող են հայտ ներկայացնել մեկ կամ երկու կամ հինգ ապրանքի համար, սակայն չեն կարող հայտ ներկայացնել ողջ 10 անվանում ապրանքի համար, հետևաբար արհեստական դուրս են թողնվում մրցակցությունից:

ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526 Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և ՀՀ Կառավարության 2017թ. նոյեմբերի 16-ի N 1454 Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ Կառավարության 10 հոկտեմբերի 2019 թվականի N 1422-Ն որոշման 22-րդ կետում նշված է, որ. «2. Գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի», սակայն Պատվիրատուն ցանկում ներառել է այնպիսի ապրանքներ, որոնք ունեն մեկ արտադրող, օրինակ Մամլիչի կառավարման ծրագրային հատուկ ապահովումը, որը պետք է համատեղելի լինի Matest սեղմման մեքենա C041A-ի հետ: Ակնհայտ է, որ նշված մասնագիտացված սարքավորման հատուկ ծրագրային ապահովման միակ արտադրողը իտալական Matesi ընկերությունն է, որին մեր ընկերությունը գրել է նամակ և ստացել պատասխան, որ ունեն ներկայացուցիչ ՀՀ-ում, հետևաբար սահմանափակվեց մրցակցությունը:

Պատվիրատուն gnumner.am կայքում հրապարակել է իր գնումների պլանը, որտեղ բոլոր ապրանքներն ունեն իրենց առանձին նախահաշվային գները:»:

Վերոգրյալով պայմանավորված՝ «Վերիտաս» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է պարտադրել պատվիրատուին ընդունել որոշում չեղյալ հայտարարել ընթացակարգը, հայտարարել նոր ընթացակարգ համապատասխանեցված Գնումների մասին ՀՀ օրենքի և Գնումների գործընթացների կազմակերպման կարգի վերաբերյալ ՀՀ Կառավարության որոշման պահանջներին:

Ընկերություն 26.01.2021թ.-ին ներկայացրած գրությամբ հավելել է հետևյալը.

«Ծանոթանալով Պատվիրատուի կողմից տրված պարզաբանումներին, հայտնում ենք, որ համատեղելիության մասով մեր ընկերությունը բողոք չի ներկայացրել և մենք չենք վիճարկում հրավերի որոշ ապրանքների նկատմամբ համատեղելիություն սահմանելու Պատվիրատուի արդարացի պահանջը (որն ի դեպ տրամաբանական է, քանի որ որոշ ձեռք բերվող հանգույցներ իրենց բնույթով օժանդակ են և պետք է ապահովել դրանց համատեղ աշխատանքը արդեն ձեռք բերված սարքերի հետ):

Մեր բարձրաձայնած խնդիրն այն է, որ Պատվիրատուն արհեստական խմբավորել է այդպիսի սարքերը և հանգույցները մեկ չափաբաժնում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պատվիրատուն գրությամբ արդեն ստանձնել է պարտավորություն կատարել մեր պահանջը՝ տրոհել մրցույթը առանձին չափաբաժինների, մենք ողջունում ենք Պատվիրատուի նման քայլը և սպասում տրոհված չափաբաժիններով մրցույթի վերահրապարակմանը:»:

3. <u>«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 21.01.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/738-2021 գրությամբ դիմել է «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամին՝ հնարավորություն տալով «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից 21.01.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 25.01.2021թ.-ի թիվ 01-13-01/25-12 գրությամբ ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը ուսումնասիրվել է և ներկայացնում ենք նշված բողոքում բարձրացված հարցերի շուրջ դիրքորոշումը և պարզաբանումը.

Համալսարանի լաբորատորիաները հիմնականում հագեցած են Matest ապրանքային նշանի լաբորատոր սարքերով: Լաբորատոր սարքեր, պարագաներ կամ ծրագրեր ձեռք բերելու դեպքում հնարավոր է ներկայիս ունեցած սարքերի հետ չաշխատեն կամ ոչ ճիշտ ցուցանիշներ արձանագրեն այդ պատճառով տեխնիկական բնութագրում գրված է, որ պետք է համատեղելի լինի Matest ապրանքային նշանին կամ մոդելին:

Նշված ծածկագրով գնանշման հարցումը կչեղարկվի և հնարավորինս տրոհված չափաբաժիններով և վերանայված տեխնիկական բնութագրերով կհրապարակվի կրկին:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2021/02 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից լաբորատոր սարքերի ձեռքբերման նպատակով 15.01.2021թ.-ին հայտարարվել է «ՃՇՀԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի համալսարանի կարիքների համար «Ակադեմիա-արդյունաբերություն համագործակցության խթանումը համագործակցային և ազատ, նորարարական հարթակի միջոցով՝ հանուն հետազոտության և զարգացման» (ALL4R&D /598719-EPP-1-2018-1-MK-EPPKA2-CBHE-JP/) ծածկագրով լաբորատոր սարքերի մատակարարման պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի (այսուհետ նաև՝ Հավելված 1) համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում լաբորատոր սարքերի ձեռքբերումը և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է՝ 38291300:

iii. Հավելված 1-ի համաձայն՝ գնման առարկա հանդիսացող «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան»

հիմնադրամի կարիքների համար լաբորատոր սարքերի ձեռքբերումը խմբավորված է 1 չափաբաժնում:

iv. 1-ին չափաբաժնով նախատեսվել է հետևյալ անվանումները

- Բազմաալիքային սեյսմոգրաֆ (Բազմուղի սեյսմոգրաֆ),
- Առաձգական հետդարձի որոշման մուրճ,
- Հարվածային մուրճի ստուգաճշտման հարմարանք,
- Մաղերի հավաքածու,
- Լաբորատոր չորանոց,
- Հիդրոստատիկ կշռման համակարգ,
- Մամլիչի սկավառակ,
- Ծրագրային ապահովում,
- K1 / V1 տրամաչափման բլոկ,
- Քայլային բլոկ մետրային պողպատից 5 քայլով,

v. www.gnumner.am կայքում առկա տվյալների համաձայն՝ «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի կողմից լաբորատոր սարքերի ձեռքբերման նպատակով 15.01.2021թ.-ին հայտարարված «ՃՇՀԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ձեռքբերվելիք գնման առարկան, սահմանված ԳՄԱ դասակարգման (CPV) կոդով, ներառվել է 2021թ.-ի գնումների պլանում:

vi. Գնումների պլանի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում ներքոնշյալ ապրանքները՝

- 1 հատ բազմաալիքային սեյսմոգրաֆ (Բազմուղի սեյսմոգրաֆ), գումարը նշված է՝ 21 700 000 ՀՀ դրամ և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է՝ 38291300:
- 1 հատ առաձգական հետդարձի որոշման մուրճ, գումարը նշված է՝ 450 000 ՀՀ դրամ և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է՝ 38291300:
- 1 հատ հարվածային մուրճի ստուգաճշտման հարմարանք, գումարը նշված է՝ 485 000 ՀՀ դրամ և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է՝ 38291300:

- 1 հատ մաղերի հավաքածու, գումարը նշված է՝ 430 000 ՀՀ դրամ և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է՝ 38291300:
- 1 հատ լաբորատոր չորանոց, գումարը նշված է՝ 1 930 000 ՀՀ դրամ և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է՝ 38291300:
- 1 հատ հիդրոստատիկ կշռման համակարգ, գումարը նշված է՝ 1 600 000 ՀՀ դրամ և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է՝ 38291300:
- 1 հատ մամլիչի սկավառակ, գումարը նշված է՝ 120 000 ՀՀ դրամ և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է՝ 38291300:
- 1 հատ ծրագրային ապահովում, գումարը նշված է՝ 120 000 ՀՀ դրամ և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է՝ 38291300:
- 1 հատ K1 / V1 տրամաչափման բլոկ, գումարը նշված է՝ 120 000 ՀՀ դրամ և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է՝ 38291300:
- 1 հատ քայլային բլոկ մետրային պողպատից 5 քայլով, գումարը նշված է՝ 120 000 ՀՀ դրամ և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է՝ 38291300:

vii. Գնումների պլանը Պատվիրատուի կողմից հաստատվել և հրապարկվել է www.gnumner.am կայքում՝ 11.01.2021թ.-ին:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից 21.01.2021թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ցանկացած պահանջ պետք է

ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի կողմից լաբորատոր սարքերի ձեռքբերման նպատակով 15.01.2021թ.-ին հայտարարված «ՃՇՀԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի Հավելված 1-ով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում լաբորատոր սարքերի ձեռքբերումը, որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է՝ 38291300, խմբավորված է 1 չափաբաժնում՝ մի շարք անվանումներով:

www.gnumner.am կայքում առկա տվյալների համաձայն՝ «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի կողմից լաբորատոր սարքերի ձեռքբերման նպատակով 15.01.2021թ.-ին հայտարարված «ՃՇՀԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ձեռքբերվելիք գնման առարկան, սահմանված ԳՄԱ դասակարգման (CPV) կոդով, ներառվել է 2021թ.-ի գնումների պլանում, որում գնման առարկա է հանդիսանում մի շարք անվանումներով ապրանքներ:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Զարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է նաև բողոքի քննությանը ներգրավված յուրաքանչյուր անձ և վերջինիս իր առարկությունների հիմքում ընկած փաստական հանգամանքները, որոնք ուղղված են բողոքով վկայակոչված փաստերի հերքմանը, պետք է նույնպես պարունակեն, ըստ էության, Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետով սահմանված դրույթներով նախատեսված փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ:

Սույն գործով՝ Ընկերությունը, օգտվելով իրեն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի դրույթերով վերապահված բողոքարկման իրավունքից, իրացրել է այն՝ ներկայացնելով բողոք:

Բողոքներ քննող անձը 21.01.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/738-2021 գրությամբ դիմել է «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամին՝ հնարավորություն տալով «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից 21.01.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը, որը Պատվիրատուի կողմից պատշաճ կերպով չի իրականացվել: Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Պատվիրատուն Բողոքներ քննող անձին չի ներկայացրել որևէ վերաբերելի ապացույց առ այն, որ վերջինիս կողմից թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտում և որ «ՃՇՀԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի Հավելված 1-ով նախատեսված՝ տեխնիկական բնութագիրը կազմված է և համապատասխանում է Օրենքի 13-րդ հոդվածի և 25-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներին, սահմանված տեխնիկական բնութագրում առկա չափորոշիչները չեն խոչընդոտում հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը, առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում խմբավորելու անհրաժեշտությունը և այլն: Ընդ որում, այդպիսի հնարավորություն Պատվիրատուն ունեցել է բողոքի քննության ընթացքում՝ մինչև որոշման կայացման պահը:

Տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից առկա է Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտում, ինչը կարող էր հանգեցնել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելուն:

Հարկ է նկատել նաև, որ Պատվիրատուն ոչ միայն չի հիմնավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում խմբավորելու անհրաժեշտությունը, ինչպես սահմանված է Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասում, այլ նաև Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հավաստիացրել է, որ Ընթացակարգը կչեղարկվի և հնարավորինս տրոհված չափաբաժիններով և վերանայված տեխնիկական բնութագրերով կհրապարակվի կրկին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները հիմնավոր են, իսկ Ընթացակարգի պահանջներն անհիմն են, ինչի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Օրենքի 13-

րդ հոդվածով և 25-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարված «ՃՇՀԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը պետք է հայտարարել չկայացած:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից 21.01.2021թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/02 ծածկագրով բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել «ՃՇՀԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**